ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1957 Общественные науки

Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի 40-ամյակին

Թ. Ադայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՑ ՀԵՏՈ

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակից հետո Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար և Կովկասի փոխարքա Նիկոլայ Ռոմանովը, որը ցարի հորեղբայրն էր, աշխատում էր ամեն կերպ «կարգ պահպանել» Կովկասում։ Մենշևիկներ Նոյ Ժորդանիան և Նոյ Ռամիշվիլին շտապում են նրա հետ համաձայնեցնելու իրենց դավաճանական պլանները։ Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսովը, վստահություն հայտնելով տեղական իշխանություններին, կոչ է անում արգելել բոլոր մանիֆեստացիաներն ու ելույթները։ Նման որոշում է ընդունում նաև Թիֆլիսի քաղաքային դուման։ Հավաքույթներն ու ելույթները արգելվում են նաև զինվորական մասերում։ Կովկասյան բանակի գլխավոր շտարից Ալեքսանդրապոլ ուղարկած հեռագրում կարգադրվում էր. «չթույլատրել մամուլում տեղեկություններ և հաղորդումներ Պետրոգրադի դեպքերի մասին»[1]։

Սակայն ո՛չ իշխանությունների «կարգ» պահպանելու ցանկությունները, և ո՛չ էլ բուրժուական պարտիաների դավաճանությունը չկարողացան կանգնեցնել Անդրկովկասում բարձրացող մասսայական հուզումների ալիքը։ Բաքվում, Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Ալավերդամ, Երևանում և այլ վայրերում տեղի էին ունենում ժողովրդական ցույցեր, որոնց ժամանակ աշխատավորները ողջունում էին ցարի տապալումը և պահանջում տեղերում իրականացնել դեմոկրատական բարեփոխումներ։

Փետրվարյան ռևոլյուցիայից հետո Սովետների համար ուժեղ պայքար է ծավալվում նաև Հայաստանի քաղաքներում և գյուղական շրջաններում։

1917 թ. մարտի 3-ին Կարսում ստացվում է ցարի տապալման լուրը։ Հաջորդ օրը՝ մարտի 4-ին և 5-ին, Կարսի 40 հազարանոց կայազորը հրաժարվում է կատարել հրամանատարության կարգադրությունները և կարմիր դրոշակներով ցույցի է դուրս գալիս։ Կայազորի բոլշևիկները ագիտացիոն-կազմակերպական լայն աշխատանք են ծավալում զինվորների մեջ։ Շարունակելով պայքարը, կայազորի զինվորները մարտի 6-ին և 7-ին ձերբակալում են ամրոցի պետ գեներալ Լինդենբաումին, շտարի պետ Սոլոմոնովին, քաղաքի պարետ Բրյակովեցկուն, նահանգապետ Սուշչինսկուն և զինվորական ու վարչական ուրիշ աշխատողների։ Լիակատարությունը հանձնվում է զինվորներից առաջ քաշված վստահելի մարդկանց։

---

[1] *Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. ??, գ. 399, թ. 1։*

Փետրվարյան ռևոլյուցիայից հետո Կարսում կազմակերպվում են բանվորական և զինվորական դեպուտատների Սովետներ, որոնք հետագայում միավորվում են մի Սովետի մեջ։

Բանվորների և զինվորների դեպուտատների Կարսի Սովետը աշխատավորների վիճակը բարելավելու նպատակով իրականացնում է մի շարք կարևոր միջոցառումներ։ Այսպես օրինակ, քաղաքի որոշ արհեստանոցներում Սովետի միջամտությամբ սահմանվում է 8-ժամյա բանվորական օր։

Աշխատավորների ռևոլյուցիոն ելույթները մեծ չափեր են ընդունում Ալեքսանդրապոլում։ Այստեղ մարտի սկզբին ստեղծվում են բանվորական դեպուտատների Սովետներ, որոնք ապրիլի սկզբին միավորվում և կազմում են բանվորների և զինվորների դեպուտատների Սովետ։ Մարտի սկզբից բանտարկվում է ժանդարմերիայի և ոստիկանության նախկին կազմը և ստեղծվում ժողովրդական միլիցիա։ Այս միջոցառումները ավելի են բարձրացնում մասսաների ակտիվությունը։

Ալեքսանդրապոլի բոլշևիկները զգալի աշխատանք ծավալեցին ռևոլյուցիոն գրականության տարածման և տեղում նոր թերթեր հրատարակելու ուղղությամբ։ Բոլշևիկների ղեկավարությամբ դեռևս մարտի սկզբին զինվորական Սովետն սկսեց հրատարակել «Սոլդատ» թերթը, որը հետո կոչվեց «Սոլդատ ի բաբոչի» և ապա՝ «Մարոչի ի սոլդատ» անունով։ Այս թերթի հրատարակման գործում Ալեքսանդրապոլում ակտիվ դեր էին կատարում բոլշևիկներ Ռ. Ղարիբջանյանը, Պ. Արվելաձեն և ուրիշներ։

Մարտի 7-ին բազմամարդ միտինգ է տեղի ունենում Էջմիածնում, որին մասնակցում են մեծ քանակությամբ զինվորներ և աշխատավորներ։ Այստեղ ճառով հանդես է գալիս Ա. Միկոյանը, որը կոչ է անում պայքարել լիակատար ազատություն ձեռք բերելու համար։

Այդ օրերին մեծ ակտիվություն էր տիրում Հայաստանի արդյունաբերական շրջաններում՝ Ալավերդում և Ղափանում։ Այստեղ էլ մարտին ստեղծվում են բանվորական դեպուտատների սովետներ։ Ղափանում ընտրվում է 10 հոգուց բաղկացած գործադիր կոմիտե, որի մեջ մտնում են հայեր, ադրբեջանցիներ և ռուսներ։ 1917 թ. ապրիլին Ալավերդուց հաղորդում էին. «Արդեն ընտրված է բանվորական խորհուրդ, ուր մտնում են բոլոր ազգերին պատկանող ներկայացուցիչներ։

Ընտրված է և Խորհրդի կատարողական կոմիտե, որ իր կազմակերպման առաջին օրից դրծի է անցել և հետզհետե տեղական բանվորության ուշադրության առանցքն է դառնում»[1]։

Ալավերդու բանվորական Սովետը մի շարք կարևոր որոշումներ կայացրեց։ Հատկապես 8-ժամյա բանվորական օրվա լոզունգը այնտեղ մասսայական բնույթ էր ստացել։ Հաճախակի տեղի ունեցող միտինգներում բանվորները ռևոլյուցիոն ճառերով հանդես էին գալիս հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով։ Այդ միտինգներում ու ժողովներում քննվում էին այնպիսի հարցեր, ինչպիսիք էին մենշևիկյան սովետների բռնած դիրքը դեպի ժամանակավոր կառավարությունը, դեպի պատերազմի, հողային և այլ հարցերը[2]։

1917 թ. մարտի 8-ին Երևանում 25-րդ հրաձգային գնդի զինվորները ապստամբում են և կազմակերպում զինվորական Սովետ։ Դարնան ամիսնե-

[1] «Պայքար», № 16, 1917 թ., Թիֆլիս։
[2] Նույն տեղում։

րին բանվորական ելույթներ և գործադուլներ են տեղի ունենում Երևանի տպարանի, էլեկտրական ընկերության և այլ ձեռնարկություններում։ Այստեղ էլ ստեղծվում են բանվորական դեպուտատների Սովետներ։

Ռևոլյուցիայի ալիքը փշրում է հայ նահապետական գյուղի պարիսպները։ Ղարաքիլիսայում մարտի 14-ին զինվորական և գյուղացիական դեպուտատներն ընտրում են շրջանային գործադիր կոմիտե, որը, ընդառաջ գնալով աշխատավորների պահանջներին, ձեռնամուխ է լինում մի շարք կարևոր միջոցառումների իրականացմանն։ Շրջգործկոմը իրեն հայտարարում է տեղական իշխանություն։

Գյուղացիական դեպուտատների սովետներ են ստեղծվում Ղազախում, Դիլիջանում, Նոր Բայազետում, Ղամարլվում, Զանգեզուրում և այլուր։

Դրությունն այդպիսին էր նաև Անդրկովկասի մյուս շրջաններում։ 1917 թ. մայիսի 1-ի տոնակատարությունն անցավ մասսաների քաղաքական ակտիվության պայմաններում։ Թիֆլիսում տեղի ունեցած բազմամարդ միտինգներում ռևոլյուցիոն ճառերով հանդես են գալիս քաղաքի մի շարք ականավոր բոլշևիկյան գործիչներ, որոնք կոչ են անում հասնել վերջնական նպատակին՝ սոցիալիզմին։ Ադրբեջանի ոչ միայն քաղաքներում, այլև բազմաթիվ գյուղերում ստեղծվում են գյուղական Սովետներ։ 1917 թ. մայիսին Լենքորանի գավառի Մասալլի գյուղում ստեղծվում է գյուղական Սովետ, որը լայն աշխատանք է տանում գյուղացիների մեջ[1]։

ՌՍԴԲՊ(բ) Կովկասյան Երկրային համագումարը, որ տեղի ունեցավ 1917թ. հոկտեմբերի սկզբին, հարուստ նյութ է տալիս փետրվարյան ռևոլյուցիայից հետո Անդրկովկասում ստեղծված դրության մասին։ Համագումարում Տրապիզոնի ներկայացուցիչ Հովսեփյանցն իր ելույթում նշում է, որ «Հեղաշրջումը (փետրվարյան ռևոլյուցիան— Ծ. Ա.) ընդունվեց խանդավառությամբ»[2]։ Սակայն շնորհիվ այն հանգամանքի, որ սոցիալ-դեմոկրատիայի ռևոլյուցիոն ուժերը անկազմակերպ էին, էսեռները սովետներում գերակշռող տեղ գրավեցին։ «Տրապիզոնի Սովետը գտնվում է էսեռների ձեռքին, որն անում է ամեն բան, որպեսզի հեղինակազրկի բոլշևիկներին։ Սովետի տպագիր օրգան „Военный листок"-ը ոչ միայն բացարձակորեն թունոտ ելույթ է ունենում բոլշևիկների դեմ, այլև ռևոլյուցիայի հիմնական հարցերում նրա բռնած դիրքը ոչնչով լավ չէ „Русское слово"-ի դիրքից»[3]։ Այնուհետև բոլշևիկ Հովսեփյանցը նշում է, որ պայքարը բոլշևիկների դեմ էսեռները սկսել էին դեռևս մինչև հուլիսյան օրերը։ Դանն այնտեղ է հասնում, որ երբ բոլշևիկներից մեկը իր ելույթում դատապարտում է Ժամանակավոր կառավարության ռազմաճակատում սկսած հարձակումը և իմպերիալիստական քաղաքականությունը, նրան կանչում են Տրապիզոնի Սովետը և ճնշում գործադրելով հարցաքննում։ Այստեղ էսեռները նույնիսկ արգելել էին բոլշևիկյան գրականությունը։ Հետագայում, հատկապես Կոռնիլովյան դավադրություններից հետո, բոլշևիկների ազդեցությունը Տրապիզոնում մեծ չափով ուժեղանում է։

Սովետներում տեղ գտած նացիոնալիստական, համաձայնողական պարտիաների ներկայացուցիչները Սովետները տանում էին Ժամանակավոր կա-

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Ադրբեջանական ֆիլիալի արխիվ, ֆ. 276, ցուցակ 3, կապոց 119, գ. 73։

[2] „Кавказский рабочий", № 169, 10 октября, 1917 г.

[3] Там же.

ռավարության հետ հաշտվելու ուղիով, աշխատավորների շահերի դավաճանության ուղիով։

Այսպիսով, փետրվարյան ռևոլյուցիայից հետո Անդրկովկասում ևս իշխանությունը շարունակեց մնալ բուրժուազիայի և կալվածատերերի ներկայացուցիչների ձեռքում։ Գյուղացիությունը հող չստացավ, որի համար նա պայքարել էր։ Հողը մնաց կալվածատերերի ձեռքին, իսկ գործարանները՝ կապիտալիստների։ Ժողովրդի արյան գնով ձեռք բերած իշխանությունը ոչ մի օգուտ չէր բերում աշխատավորությանը, որն սկզբնական շրջանում միամտորեն դեռևս հավատում էր, թե հողը կտրվի գյուղացիներին, իսկ բանվորների դրությունն էլ կլավանա։ Մինչ դեռ Ժամանակավոր կառավարության օրգանները թե՛ կենտրոնում և թե՛ ծայրամասերում կեղծավորաբար հույսեր էին տալիս և խոստումներով կերակրում մասսաներին։

* * *

1917 թ. մարտի 9-ին Ժամանակավոր կառավարության որոշմամբ կազմվում է այսպես կոչված՝ Անդրկովկասյան Հատուկ Կոմիտե (ОЗАКОМ), որի նախագահն էր կադետ Խարլամովը։ Դա Ժամանակավոր կառավարության օրգանն էր, երկրամասում նրա հակաժողովրդական ներքին ու արտաքին քաղաքականության իրականացնողը։ Այդ կոմիտեի մեջ սկզբում մտան Չորրորդ Պետական դումայի անդամները (կադետներ Խարլամովը, Պապաջանովը, մուսավաթական Ջաֆարովը, սոցիալ-ֆեդերալիստ Աբաշիձեն), իսկ հետո, այն «դեմոկրատացնելու» նպատակով նաև մենշևիկ Չխեենկելին։ Ռուսաստանում ևս, երբ ստեղծվեց առաջին կոալիցիոն կառավարությունը, նույն կարգով նրա մեջ մտան Պետական Դումայի անդամները, իսկ հետո նաև մենշևիկ «սոցիալիստներ»։

Այսպիսով, Անդրկովկասում ևս ստեղծվեց երկիշխանություն. մի կողմից, ունևոր դասակարգերի դիկտատուրան՝ Ժամանակավոր կառավարության կողմից ստեղծված Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեն, իսկ մյուս կողմից՝ բանվորական, գյուղացիական, զինվորական դեպուտատների Սովետները, որպես բանվորների և գյուղացիների իշխանության օրգաններ։ Անդրկովկասում նույնպես Սովետների մեջ սկզբում խցկվեցին հակառևոլյուցիոն պարտիաների ներկայացուցիչները՝ մենշևիկներ, դաշնակներ և էսեռներ, որոնք մեծամասնություն կազմելով Սովետներում, դրանք փաստորեն դարձրին Ժամանակավոր կառավարության կցորդը։

Սովետներում խցկված բուրժուական պարտիաների ներկայացուցիչները անց էին կացնում հակաժողովրդական քաղաքականություն։ Այսպես օրինակ, խոսելով Երևանի Սովետի վարած քաղաքականության մասին, բոլշևիկյան «Պայքար» թերթը 1917 թ. գրում էր. «... Այստեղ (Երևանում — Ծ. Ա.) տակավին հրապարակ չի եկել բանվորների պատգամավորական խորհուրդը... Այս խորհուրդը բաղկացած է դաշնակցական ճղճիմ միջավայրի անգույն ներկայացուցիչների մեծամասնությունից, երրորդ ամիսն է դեռ օրորվում է անորոշության և զանազան այնպիսի խղճուկ հարցերի շուրջը ժամանակ մեռցնելուց, որ տակավին իր գործադիր կոմիտեի ընտրությունը չի կայացրել և իր պարտականությանը չի անցել»[1]։

[1] «Պայքար», № 37, 1917 թ.։

Ցարիզմի տապալումը, բուրժուազիայի կողմից իշխանության բռնագրավումը և փեթարվարյան ռևոլյուցիայից հետո ստեղծված երկիշխանությունը երկրամասում առաջ բերին քաղաքական նոր իրադրություն։ Մենշևիկներին ու էսեռներին, աշխատավորների այդ կատաղի թշնամիներին, մի շարք պայմանների բերումով հաջողվեց ժամանակավորապես խաբել մասսաներին և Սովետներում ղեկավար տեղ գրավել։ Նրանք բռնեցին ժամանակավոր կառավարության հետ հաշտություն կնքելու, նրան աջակցելու ուղին։ Բուրժուական պարտիաների նպատակն էր կանգնեցնել ռևոլյուցիայի ընթացքը և այն դնել բուրժուական կոնստիտուցիոնիզմի՝ այսպես կոչված «խաղաղ, օրինական» սահմանների մեջ։

Բոլշևիկները, ինչպես կենտրոնում, այնպես էլ ծայրամասերում, վճռական պայքար հայտարարեցին համաձայնողական պարտիաների քաղաքականությանը։ 1917 թ. մարտի 5-ին վերսկսվեց «Ռաբոչի» թերթի հրատարակումը։ Աքսորավայրերից և բանտերից ազատվեցին բազմաթիվ ականավոր ռևոլյուցիոն գործիչներ։ Բոլշևիկները մերկացնում էին ժամանակավոր կառավարության իմպերիալիստական դեմքը և ցույց տալիս, որ այդ կառավարությունը հակաժողովրդական է և ի վիճակի չէ ժողովրդին տալու ո՛չ հող, ո՛չ ազատություն և ո՛չ էլ խաղաղություն։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, Վ. Ի. Լենինի ցուցումներով, մեծ աշխատանք էին տանում մասսաներին ճիշտ կողմնորոշելու և ժամանակավոր կառավարությանը մերկացնելու համար։ Նրանք ցույց էին տալիս ժամանակավոր կառավարության և նրա դրածո Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեի կոնտրռևոլյուցիոն բնույթը, մերկացնում էին մենշևիկների, էսեռների, դաշնակների և մուսավաթականների հակաժողովրդական էությունը։ Երկրամասում գնալով ավելի ու ավելի էր մեծանում մասսաների դժգոհությունը, ավելի մեծ ծավալ էին ընդունում ռևոլյուցիոն շարժումները։

Անդրկովկասում ռևոլյուցիոն պայքարի առաջին շարքերում ընթանում էր Ռաքվի հերոսական պրոլետարիատը։ Ռաքվի Սովետը, ողջունելով Թիֆլիսի բանվորների դեպուտատների Սովետին, հույս է հայտնում, որ «Կովկասյան պրոլետարիատը, իր շուրջը միավորելով բոլոր ազգությունների դեմոկրատիան և հավատարիմ մնալով 1905 թ. հերոսական պատգամներին... իր պարտքը կկատարի Ռուսաստանի և ամբողջ աշխարհի պրոլետարիատի առջև»[1]։

Ժամանակավոր կառավարության և նրա դրածո Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեի դեմ պայքարը ծավալվում է նաև Հայաստանում։

1917 թ. գարնանը Հայաստանում տեղի են ունենում մի շարք բանվորական գործադուլներ և գյուղացիական ելույթներ։ Գործադուլ են հայտարարում Երևանի տպարանի, «Ամպեր» էլեկտրական ընկերության, ինչպես նաև մի շարք այլ հիմնարկ-ձեռնարկների բանվորներն ու ծառայողները։ Նույն թվականի հուլիսին Երևանում ժամանակավոր կառավարության դեմ ընդհանուր ցույց տեղի ունեցավ, որն ընթացավ բոլշևիկյան լոզունգներով։ Մի շարք գործադուլներ տեղի ունեցան նաև Հայաստանի այլ քաղաքներում, ինչպես նաև Հայաստանի երկաթուղային հանգույցներում։

1917 թ. հունիսի 24-ին Ղարաքիլիսայում տեղի ունեցավ 37-րդ և 47-րդ բրիգադաների զինվորների ժողովը, որտեղ զեկուցում լսվեց «Ռուսաստանի

[1] „Кавказский рабочий", 13 марта 1917 г.

քաղաքական պարտիաների մասին» և «Ներկա մոմենտի մասին»։ Ժողովին մասնակցում էին նաև տեղի աշխատավորների և ինտելիգենցիայի ներկայացուցիչները։ Վիճաբանությունների ժամանակ զեկուցողի դեմ դուրս եկավ ուսանող մենշևիկ Տեր-Հարությունյանցը։ Սակայն ժողովը դատապարտեց այդ մենշևիկին։ Ժողովում միաձայն ընդունված բանաձևում ասվում էր, որ բոլշևիկների պարտիան պրոլետարիատի պարտիան է, աշխատավոր դասակարգի միակ պաշտպանը։ Ահա մի հատված այդ ժողովի բանաձևից. «Պահանջում ենք ամբողջ իշխանության անցում ռևոլյուցիոն օրգաններին. այսինքն, զինվորական, բանվորական և գյուղացիական դեպուտատների ձևքը»։

1917 թ. հուլիսին բոլշևիկ Ստեփան Ալավերդյանը, որպես «Կավկազսկի ռաբոչի» թերթի թղթակից, «Նամակ Սարիղամիշից» թղթակցության մեջ նշում էր, որ Սարիղամիշում, փետրվարյան ռևոլյուցիայի առաջին օրերից սկսած, ստեղծվել է լիակատար կազմակերպվածություն, որը հակահարված է տվել ռևոլյուցիոն շարժումը կազմալուծող տրամադրություններին։ Թղթակցության մեջ կարդում ենք. «Ռևոլյուցիոն պրոլետարիատը և բանակը, ջերմորեն արձագանքելով հասարակական կյանքի բոլոր երևույթներին, համախմբվեցին ռևոլյուցիոն դրոշի տակ։

Թվում է, թե կասկած անգամ չի կարող լինել, որ հետագայում էլ այդ ձևով կշարունակվի և ռևոլյուցիոն շարժման միասնությունը կպահպանվի մինչև վերջ»[2]։

Սակայն, ինչպես մյուս վայրերում, այնպես էլ Սարիղամիշում, հանդես են գալիս «պրովակատորներ, արյունոտ Նիկոլայ-ժանդարմի նախկին ծառաներից և ոստիկաններից, որոնք ռևոլյուցիոն ուժերի շարքերում առաջացնելով գժտություն և քայքայում, կատարում են իրենց սև գործը»[3]։ Այդ պրովոկատորներին հաջողվում է հունիսի 30-ին Սարիղամիշի կայարանում դժգոհություն առաջացնել բանվորների դեմ և մի շարք անարխիստական էքսցեսներ կազմակերպել։

Պրովոկատորների մի փոքրիկ խումբ, որին գլխավորում էին ժանդարմական նախկին երկու չինովնիկ, հունիսի 29-ի առավոտյան սկսեց կայարանում զինվորների մեջ լուրեր տարածել, թե իբր երկաթուղային բանվորները զինվորների համար ստացված ծանրոցները թաքցնում և նրանց չեն տալիս։ Պրովոկատորներին հաջողվում է զինվորների անգիտակից մասը հակադրել բանվորներին և նրանց միջև ընդհարումներ կազմակերպել, որը «որպես արյունոտ գորշ բիծ մթագնեց Սարիղամիշի լուսավոր ռևոլյուցիոն օրերը»[4]։ Հունիսի 29-ին պրովոկացիոն դեպքի ժամանակ, անարխիստական խմբերը հարձակվում և տեղն ու տեղը սպանում ու վիրավորում են անմեղ բանվորներին։ Ըստ որում պրովոկատորները հարբած էին։ «Անգիտակից զինվորների խմբերը— գրում է Ստ. Ալավերդյանը,— ծեծում էին բանվորներին, իսկ պրովոկատորները նրանց հետևից քրքջում էին և հրահրում բանվորներին մասսայական ջարդի»[5]։ Երբ տեղական գործադիր կոմիտեն զինվորներին առա-

---

[1] „Кавказский рабочий", № 95, 9 июля 1917 г.
[2] Նույն տեղում, № 7։
[3] Նույն տեղում։
[4] Նույն տեղում։
[5] Նույն տեղում։

օարկում է դադարեցնել այդ խայտառակ դազանությունը, անարխիստական տարրերը հարձակվում են նաև Գործկոմի անդամների վրա։

Հաջորդ օրը, բանվորների և զինվորների դեպուտատների Սովետի Գործկոմի նախաձեռնությամբ կայարանի հրապարակում տեղի է ունենում բազմամարդ միտինգ, որի մասնակիցները դատապարտում են պրովոկատորների սև գործը և միաձայն ընդունված բանաձևում կոչ են անում ռևոլյուցիոն բանակին և պրոլետարիատին միասնական պայքարի՝ ընդդեմ աշխատավորների թշնամիների։

Հուլիսի 2-ին տեղի ունեցավ հունիսի 29-ի պրովոկացիայի զոհի թաղումը, որը վերածվեց բանվոր դասակարգի և զինվորների միասնական խոշոր ցույցի։ Այդ երաշխիք էր այն բանի, որ «բանակն ու բանվոր դասակարգը, որպես անբաժանելի ու միասնական ուժ, կանգնած են ռևոլյուցիայի պաշտպանման դիրքերում»[1]։ Միտինգում շատերի հետ դամբանական ճառով հանդես է գալիս նաև Թիֆլիսից եկած ՌՍԴԲՊ(բ) Երկրային Կոմիտեի ներկայացուցիչը, որը մերկացնում է ռևոլյուցիայի թշնամի պրովոկատորների սև գործը։ Պրովոկացիայի անմեղ զոհ դարձած բանվոր Բուրժանիձեի դագաղի վրա ծածանվում էին դրոշները և, ինչպես Ստ. Ալավերդյանն է գրում,—նա, «ով տեսավ այդ տեսարանը, նա պետք է տուն վերադառնար լիակատար հավատով, որ նման ստոր պրովոկացիա այլևս չի լինի Սարիղամիշում և ով որ կհամարձակվի գժտություն առաջացնել զինվորների ու բանվորների միջև, խստորեն կպատժվի ռևոլյուցիոն դեմոկրատիայի օրգանների կողմից»[2]։

Զարգացող իրադարձությունները գնալով ապացուցում էին մոմենտի գնահատման լենինյան գծի ճշտությունը։ Ժամանակավոր կառավարության իմպերիալիստական քաղաքականությունը ավելի ու ավելի էր մերկացնում ինքն իրեն։ Մասսաների ռևոլյուցիոն պայքարը օրըստօրե սուր բնույթ էր ստանում թիկունքում և ռազմաճակատում։ Այդ տեսակետից ուշագրավ է Կովկասյան առաջին բանվորական գումարտակի 6-րդ վաշտի բանաձևը։ Այնտեղ նշված էր, որ զինվորներն իրենց ընդհանուր ժողովում, քննելով երկրի դրությունը, նշեցին, որ երկիրը և ռևոլյուցիան վտանգի առաջ են կանգնած, և որ այդ դրությունից դուրս գալու ելքը բոլոր երկրների դեմոկրատիայի խիզախ ելույթն է իրենց կառավարությունների դեմ, նրանց համատեղ պայքարը խաղաղության համար։ Ժողովը որոշեց կոչ անել «ամբողջ իշխանությունը բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների Սովետների ձեռքը հանձնելու, ռուսական դեմոկրատիայի առաջարկած պայմաններով խաղաղության, Սովետների վերընտրության, գաղտնի, թալանչիական պայմանագրերի հրապարակման, կալվածատիրական և եկեղեցական հողերը գյուղական հողային կոմիտեներին հանձնելու, բանտարկված բոլշևիկների և ինտերնացիոնալիստների ազատ արձակման, միտինգների և ժողովների թույլատրման, բոլշևիկյան մամուլի ազատության, բանվորների և զինվորների ռևոլյուցիոն զինման մասին»[3]։

1917 թ. հունիսի 19-ին 106-րդ հետևակային գնդի 14-րդ վաշտի զինվորները իրենց ընդհանուր ժողովում ընդունած բանաձևում պահանջում են ամբողջ իշխանությունը հանձնել Սովետներին, քանի որ Ժամանակավոր կա-

---

[1] „Кавказский рабочий", № 95, 9 июля 1917 г.
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, № 179, 21 октября 1917 г.

ռավարությունը «ցույց տվեց, որ չի կարող փրկել ռևոլյուցիան և երկիրը»[1] կատարյալ ադետից։

Զինվորները պահանջում էին նաև դեմոկրատացնել բանակը և վերացնել ցարական կարգերից ժառանգություն մնացած դեսպոտիզմը։

Ռևոլյուցիոն պայքարն աշխուժանում է նաև հայ գյուղում։ Գյուղացիական ելույթները մեծ ծավալ են ընդունում Լոռու, Ախտալի, Սևանի և այլ շրջաններում։ Գյուղացիները պայքարում էին հողի համար, հրաժարվում էին հարկերը վճարելուց, բռնագրավում էին կալվածատիրական հողերը, հրկիզում նրանց դաստակերտները։ Գյուղացիների կողմից կալվածատիրական հողերի բռնագրավումը մասսայական բնույթ էր կրում Բորչալուի և Ղազախի գավառներում։ Հողերի բռնագրավումը հաճախ կատարվում էր մի քանի գյուղերի բնակիչների միասնական ուժերով։ Իշխանության ներկայացուցիչները ցանկանում էին ամեն կերպ մեղքը գցել առանձին անհատների վրա «նպատակ ունենալով աքողել գյուղացիական պայքարի մասսայական բնույթը և «կասկածելի» մարդկանց «օրինական» պատասխանատվության ենթարկել»[2]։ Սակայն ի՞նչ կասկածելի մարդկանց մասին էր խոսքը, գրում է „Кавказский рабочий" թերթի թղթակիցը, «երբ գյուղացիները բոլորովին հող չունեին։ Իսկ որպեսզի դրանում համոզվենք, հարկավոր է տեղում ծանոթանալ գյուղացիների դրության հետ»[3]։

Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեն ամենուրեք հանդես էր գալիս որպես կալվածատերերի շահերի պաշտպան։ Հմբոստ գյուղացիների նկատմամբ նա ձեռք էր առնում ամենախիստ պատժիչ միջոցներ, կազմակերպում էկզեկուցիաներ։

Իշխանության տեղական օրգաններում ևս բուն էին դրել ցարական չինովնիկները ու ստրաժնիկները, կալվածատերերն ու կուլակները։ 1917 թ. ապրիլին Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեն հրատարակում է «օրենք՝ Անդրկովկասի սահմաններում տեղական իշխանություն կազմակերպելու մասին»։ Այդ «օրենքի» համաձայն պետք է «ընտրվեին» տեղական գործադիր կոմիտեներ, սակայն իրականում ոչ մի ընտրություն տեղի չունեցավ։ Գյուղական տզրուկները ու ցարական պաշտոնյաները, սպեկուլյանտները ու կուլակները, օգտագործելով իրենց նպաստավոր նյութական դրությունը, գրավում էին տեղական պաշտոնները։ 1917 թ. ապրիլին Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեին ուղղած իրենց դիմումի մեջ Երևանի նահանգի Գյառնի-բասարի շրջանի մի խումբ գյուղացիներ և ուսուցիչներ գրում էին.

«Ի մեծ դժվարություն մեզ և մեր շրջանի, գյուղական և հասարակական գործադիր կոմիտեներում ընտրվում են միայն ոստիկաններն ու կուլակները... Բնակչությունը ժողովրդական դահիճների (դաշնակների—Ծ. Ա.) պարտիայի ճնշման տակ ընտրում է... հարուստներին, կուլակներին։ Ընտրությունների պատկերը հետևյալն է. երևկվա կաշառակերը, ցեցը, կուլակը և ավազը, այսօր ոչ միայն գործադիր կոմիտեի անդամ է, այլև կոմիսար, որը մի օրվա ընթացքում միապետականից դարձավ ռևոլյուցիոներ»[4]։

---

[1] Бакинский рабочий, № 23, 7 июля 1917 г.

[2] „Кавказский рабочий", № 149, 14 сентября 1917 г.

[3] Նույն տեղում։

[4] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 517, թ. 13։

1917 թ. հուլիսի սկզբներին Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեն տեղերում իր վարչական օրգաններն ստեղծելու համար նշանակեց ընդհանուր ընտրություններ։ Այդ կապակցությամբ «Կավկազսկի ռաբոչի» թերթի հատուկ թղթակից Մ. Մկրտչյանցը Մեծ Հարաքիլիսայից հայտնում էր, որ այդ ընտրությունների մասին գաղափար կազմելու համար բավական է լինել գյուղերում և ամեն մի պատահած գյուղացու հարցնել, թե ովքե՞ր են ընտրվել տեղական գործադիր կոմիտեների կազմում և ո՞վ է նշանակված գյուղական կոմիսար։ Մեծ մասամբ նրանք միատեսակ պատասխան կտան՝ «Մեր խանութպանը և պարոնը» կամ թե՝ «նախկին ստրաժնիկը և դուխանշչիկը», կամ «պանիր պատրաստող գործարանի տերը և նախկին գրագիրը, կամ ստարշինան»։ Ուրիշ խոսքով՝ հանրագումարի բերելու դեպքում կստացվի, որ բոլոր ընտրվածների 90 տոկոսը հարուստներ, կալվածատերեր, տզրուկներ, կուլակներ, հին ռեժիմի «պատվավորներ», ոստիկաններ ու ավազակներ էին[1]։

«Կավկազսկի ռաբոչի» թերթի հատուկ թղթակիցը նշում է, որ այն դեպքում, երբ Անդրկովկասի քաղաքներում, բանվորական շրջաններում ռեոլյուցիան ոչ միայն կանգ չի առել, այլ՝ ընդհակառակը, «նկատվում է հսկայական աճ թե՛ լայնությամբ և թե՛ խորությամբ...»[2], գյուղում կյանքը անհամեմատ հետ էր մնում, որի պատճառը Անդրկովկասի Հատուկ Կոմիտեի և նացիոնալիստական պահպանողական պարտիաների քայքայիչ աշխատանքն է։

Անդրկովկասի Հատուկ Կոմիտեի կարգադրությամբ ընտրությունները գյուղում կատարվում են շատ կարճ ժամանակում, այն էլ ամառային գյուղատնտեսական աշխատանքների ամենաեռուն պահին։ Գյուղերին կցված ներկայացուցիչներից ամեն մեկը մի օրում 5—6 գյուղում անց էր կացնում ընտրություններ, որի ժամանակ միջին հաշվով 200—300 ընտրողներից ներկայանում էին 9—10 մարդ՝ գյուղի համփաներից և աղաներից, որոնք էլ հենց «ընտրվում» էին։ Գյուղացիները տեսնելով այդ բոլորը, զայրույթով ասում էին. «Չէ՞ որ այդ դեմոկրատական չէ, չէ՞ որ այդ խայտառակություն է», իսկ դրան լիազորները պատասխանում էին. Անդրկովկասի Հատուկ Կոմիսարիատի «Կանոնադրության համաձայն ընտրությունները օրինական են, եթե ընտրողներից 15-ը ներկա են»[3]։ Աշխատավոր գյուղացիությունը զրկված էր այդ ընարությունների մասնակցելու հնարավորությունից. նա զբաղված էր դաշտային աշխատանքով, «որպեսզի ձմեռը քաղցած չմնա, ժամանակ չգտնելով զբաղվել քաղաքականությամբ և իր գյուղի վարչական գործերով»[4]։ Թերթի թղթակիցը զայրույթով գրում էր. «Ամոթ է ու անիրավություն խաբել մեր աղքատ գյուղացիներին»։ Հետո թղթակիցը վրդովմունքով հարց է տալիս. «Ի՞նչ է անում մեր ռեոլյուցիոն Կոմիտեն։ Ի՞նչ են անում մեր Սովետները։

Ժամանակն է, որպեսզի Անդրկովկասյան Կոմիտեի ամբողջ գործունեության վրա վերահսկողություն սահմանվի։

Մեր գյուղը հետամնաց է ու իավար։ Ադմինիստրացիան նախկինի պես մնում է կալվածատերերի ձեռքին»[5]։

---

[1] „Кавказский рабочий", № 160, 29 сентября 1917 г.

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

[4] „Кавказский рабочий", № 160, 29 сентября 1917 г. М. Мкртчянц. Результаты выборов сельских исполнительных комитетов в Закавказье.

[5] Նույն տեղում։

1917 թ. հոկտեմբերի 22-ին, Անդրկովկասի գյուղացիությանը ուղղված կոչում, Ստ. Շահումյանը նշում էր, որ Ռոմանովների տիրապետության անկումից հետո, յոթը ամիս է անցել, սակայն դրությունը երկրում չի փոխվել։ Նախկինի պես գյուղացիների զավակները սպանդի դիրքերում մահանում են թշնամու գնդակներից և կառավարության կողմից վերականգնված մահապատժից ու ռազմա-դաշտային դատարաններից։ Գյուղացիների արյունով ու քրտինքով ուռճացած կալվածատերերը շարունակում են իրենց անսահման իշխանությունն ու հալածանքները գյուղացիների նկատմամբ։ Իսկ երբ գյուղացիները կազմակերպված կերպով սկսում են գրավել կալվածատիրական հողերը, կառավարությունը և համաձայնողական պարտիաները միաձայն գոռում են գյուղացիական անարխիայի մասին։ Գյուղում նորից հանդես են գալիս պատժիչ ջոկատներ, որոնք ցրում են հողային կոմիտեները, իսկ գյուղացիների ընտրյալներին բանտերը նետում։ Վերականգնում են ցարական կարգերն ու օրենքները։

Կառավարությունը, ելնելով կալվածատերերի շահերից, երկու անգամ բարձրացրեց ցորենի գինը։ Ի պատասխան դրա, գյուղացիությունը սկսեց համախմբել իր ուժերը և ավելի ուժգին պայքարի դուրս եկավ թշնամուց վրեժ առնելու համար։ «Հրկիզվում են տերերի կալվածքները, կրակը լափում է նրանց ունեցվածքը»,— գրում էր Ստ. Շահումյանը հիշյալ կոչում։

Մասսաների հասունացող պայքարը գլխավորում էին բոլշևիկյան կազմակերպությունները։ Այդ ժամանակ Հայաստանում բոլշևիկյան կազմակերպություններ էին գործում Ալեքսանդրապոլում, Երևանում, Սարիղամիշում Ալավերդում և այլ վայրերում։ Իրենց աշխատանքները վերականգնում են ցարիզմի օրոք ընդհատակ անցած մի քանի բոլշևիկյան բջիջներ ու կազմակերպություններ։ Այսպես, վերականգնվեցին Նոր Բայազետի, Ղափանի, Դիլիջանի, Շամշադինի, Իջևանի և մի շարք ուրիշ շրջանների կոմունիստական կազմակերպություններն ու բջիջները։ Լույս տեսան մի շարք բոլշևիկյան թերթեր։

Ժամանակավոր կառավարության հակաժողովրդական քաղաքականության մերկացման հետ ասոիճանաբար պարզ է դառնում մենշևիկների, էսերների, դաշնակների և մյուս բոլոր համաձայնողական պարտիաների դավաճանական գործունեությունը։ Դրա հետևանքով էլ ավելի սուր բնույթ է ստանում հասարակական տարբեր խավերի ու քաղաքական պարտիաների պայքարը։ Հայ իրականության մեջ դրա կոնկրետ արտացոլումն էր ռևոլյուցիոն մամուլի և բոլշևիկների սահմանազատումը մենշևիկներից։ Այդ տեսակետից կարևոր փաստաթուղթ է «Պայքար» թերթի խմբագրության նախկին անդամների և աշխատակիցների՝ մի խումբ հայ բոլշևիկների բաց նամակը ընթերցողներին և պարտիական ընկերներին, որը հրապարակվել է «Կավկազսկի ռաբոչի» թերթի էջերում 1917 թ. հունիսի 18-ին։ Նամակը ստորագրել էին Ստ. Շահումյանը, Աքանով Մռավյանը (Մանսուրյան), Ա. Միկոյանը, Հակոբ Հակոբյանը (Պրոլետար), Ա. Ամիրյանը, Ս. Խանոյանը, Բանվոր Խնչոն և ուրիշներ, թվով 21 մարդ։ Նրանք հայտարարում էին, որ հնարավոր չեն համարում հետագայում աշխատակցել մենշևիկների հետ և տվյալ մոմենտից հրաժարվում են աշխատակցելու նշված թերթին։ Երկու տարբեր հոսանքների համատեղ աշխատանքը միևնույն օրգանում նրանք գտնում էին «պրոլետարիատի շահերի համար անչափ վնասակար»։ Այնուհետև բոլշևիկները նշում էին, որ թողնելով «Պայքար» թերթը ելնում են այն համոզմունքից, որ ռու-

սական ռևոլյուցիան պարտավորեցնում է պրոլետարիատի պարտիային դեն նետել այն տարրերին, որոնք «ընդհանուր ոչինչ չունեն բանվոր դասակարգի հետ»[1]։

«Պայքար» թերթի աշխատակից հայ բոլշևիկները, կտրելով իրենց կապերը մենշևիկներից, ստեղծում են բոլշևիկյան «Բանվորի կոիվը» թերթը, որը ՌՍԴԲՊ(բ) Թիֆլիսի Կոմիտեի օրգանն էր և լույս էր տեսնում շաբաթական երեք անգամ (չորեքշաբթի, ուրբաթ, կիրակի)։ Նրան աշխատակցում էին ժամանակի շատ ականավոր ռևոլյուցիոն գործիչներ։

«Կավկազսկի ռաբոչի» բոլշևիկյան թերթը 1917 թ. հուլիսի 1-ին «Բանվորի կոիվը» թերթի բաժանորդագրության պայմանների հետ միասին հայտնում է, որ այդ թերթին աշխատակցում են Ստեփան Շահումյանը, Ասքանազ Մռավյանը, Արսեն Ամիրյանը, Աստուր Կախոյանը, Անուշավան Վարդանյանը, Անաստաս Միկոյանը, Հակոբ Կամարին, Արշավիր Մելիքյանը, Սուրեն Հովսեփյանը, Սերգո Խանոյանը, Արտաշես Կարինյանը, Գուրգեն Հայկունին, Հակոբ Հակոբյանը և ուրիշներ։

1917 թ. մայիս-հունիս ամիսներին Ստ. Շահումյանի խմբագրությամբ Բաքվում սկսվում է լույս տեսնել «Սոցիալ-դեմոկրատ» հայերեն թերթը։

Ալեքսանդրապոլում սկսց հրատարակվել բոշևիկյան «Նոր կյանք» թերթը։ 1917 թ. օգոստոսից այստեղ սկսվում է լույս տեսնել նաև «Պրավդա ժիզնի» ռուսերեն թերթը։ Բավական է նշել, որ 1917 թ. լույս են տեսել 43 անուն հայերեն թերթեր, որոնք տպագրվում էին Ռուսաստանի և Անդրկովկասի տարբեր հայաբնակ վայրերում։

Բոլշևիկյան հայ մամուլն առաջնորդվում էր «Պրավդա»-ի տրադիցիաներով։ Անդրկովկասի բոլշևիկյան հայ մամուլի համար ղեկավար դեր էր կատարում նաև բոլշևիկյան «Կավկազսկի ռաբոչի» թերթը։ Այդ թերթերը շատ մեծ տարածում էին գտնում Անդրկովկասի աշխատավորների մեջ։ Բանվորները, զինվորները և գյուղացիները միջոցներ էին հավաքում և մասսայական օգնություն ցույց տալիս իրենց թերթերին։

Բոլշևիկյան մամուլը վիթխարի դեր էր կատարում մասսաների քաղաքական դաստիարակության և նրանց ռևոլյուցիոն պայքարը կազմակերպելու գործում։ Բոլշևիկյան կազմակերպությունների ագիտացիոն-բացատրական և քաղաքական-կազմակերպական աշխատանքը մոբիլիզացնում էր բանվորների և գյուղացիների ուժերը։ Օրավուր խտանում էին ռևոլյուցիոն մասսաների շարքերը, բուրժուական ժամանակավոր կառավարության դեմ ուղղված պայքարը ստանում էր նոր թափ, ընդգրկում էր ավելի լայն մասշտաբներ։

Ճակատում զինվորական կոմիտեները անընդհատ ընդհարվում էին սպաների հետ, որոնք նախկինի պես բռնանում և հալածում էին զինվորներին։ Գյուղերում մասսաների կողմից ընտրված հողային կոմիտեներն ամեն մի քայլափոխում հանդիպում էին կալվածատերերի և կառավարական չինովնիկների կատաղի դիմադրությանը, գործարաններում բանվորները պայքարում էին սև ցուցակների և լոկաուտների դեմ։ Այդ ամենի դիմաց ժամանակավոր կառավարությունը սրում էր ռեպրեսիաները։ Բանը նույնիսկ այնտեղ էր հասել, որ ցարիզմի կողմից հալածված քաղաքական էմիգրանտներին, որպես «ան-

[1] „Кавказский рабочий", № 78, 18 июня 1917 г.

հաճելի» էլեմենտների, արգելվում էր հայրենիք վերադառնալ։ Պատահել են դեպքեր, երբ մարդիկ վերադառնալով հայրենի գյուղը բանտարկվել են 1905 թ. ռևոլյուցիային մասնակցելու համար։

Պաշտպանողականները աճող դժվարություններին պատասխանում էին «Սպասեցեք Սահմանադիր ժողովին, այն կհրավիրվի դեկտեմբերին»։ Սակայն այդ պատասխանը չէր կարող բավարարել մասսաներին, որոնք իրավացիորեն պահանջում էին ռազմաճակատում՝ հաշտություն, գյուղացիներին՝ հող, արտադրության մեջ՝ բանվորական հսկողություն։

Զինվորները մասսայաբար լքում էին ռազմաճակատը, գյուղացիները հրդեհում էին կալվածքները և բռնագրավում հողը, բանվորները կազմակերպում էին գործադուլներ, քաղաքական ցույցեր։

Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը տատանվում էր մանր ռեֆորմների և ուժեղ ռեպրեսիաների միջև։ Ժամանակավոր կառավարության աշխատանքի մինիստր Սկոբելևը 1917 թ. օգոստոսի 28-ին (սեպտեմբերի 10-ին) իր «Սահմանափակող» կարգադրությամբ բանվորական կոմիտեներին արգելեց հավաքներ կազմակերպել։ Առաջավոր թերթերը արգելվում էին, իսկ ռևոլյուցիայի կոչ անողները ենթարկվում մահապատժի։ Փորձեր էին արվում զինաթափելու կարմիրգվարդիական ջոկատները։ Տեղերում «կարգ» պահպանելու համար հատուկ կազակային խմբեր էին ուղղարկվում։

Այդ բոլոր միջոցառումները պաշտպանում էին «չափավոր» սոցիալիստները», որոնք գտնում էին, որ պետք է գործակցել իշխող դասակարգերի հետ։ Այդ պատճառով էլ աշխատավոր մասսաները երես էին թեքում նրանցից և անցնում էին բոլշևիկների կողմը։

1917 թ. սեպտեմբերին, Կերենսկին, գործակցելով «չափավոր» սոցիալիստների հետ, աշխատավոր մասսաների կամքին հակառակ շահագործողների դասակարգերի ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծեց կոալիցիոն կառավարություն։ Իրենց սոցիալիստ հորջորջող պարտիաները, մտնելով կոալիցիոն կառավարության մեջ, վերջնականապես կորցրին ազդեցությունը մասսաների մեջ։ Վերջիններիս վերաբերմունքը դեպի այդ կառավարության սոցիալիստ-մինիստրները շատ դիպուկ կերպով արտահայտված է „Рабочий путь“ թերթում տպագրված «Սոցիալիստ մինիստրները» հոդվածում։ Թերթը ալսպես է բնութագրում այդ մինիստրների «ծառայությունները»։

«Ծ ե ր ե թ ե լ ի — Զինաթափեց բանվորներին, գեներալ Պոլովցևի հետ մեկտեղ «խաղաղեցրեց» ռևոլյուցիոն զինվորներին և հավանություն տվեց զինվորների մահապատժին։

Ս կ ո բ ե լ ե վ — Սկսեց նրանով, որ խոստացավ կապիտալիստներից 100 տոկոս շահույթը վերցնել, բայց վերշացրեց... բանվորների ֆաբրիկա-գործարանային կոմիտեները ցրելու ցանկությամբ։

Ա վ կ ս ե ն տ ի ե վ — Բանտ նստեցրեց մի քանի հարյուր գյուղացիներ, հողային կոմիտեների անդամներ, փակեց մի քանի տասնյակ բանվորական և զինվորական թերթեր։

Զ ե ր ն ո վ — Ստորագրել է ցարական մանիֆեստը՝ ֆինլանդական սեյմը ցրելու վերաբերյալ։

Ս ա վ ի ն կ ո վ — Գեներալ Կորնիլովի հետ ուղղակի բանակցություններ մեջ մտավ, բայց Պետրոգրադը չհանձնվեց հայրենիքի այդ «փրկարարին»՝ Սավինկովից անկախ պայմանների հետևանքով։

Զ ա ո ո ւ դ ն ի — Ալեքսինսկու և Կերենսկու հետ մեկտեղ բանտ նստեցրեց հազարավոր ռևոլյուցիոն բանվորներ, նավաստիներ և զինվորներ, օգնեց բոլշևիկների դեմ կեղծ «դործ» հորինելուն, որը ռուսական դատարանի համար այնպիսի ամոթանք է, ինչպիսին էր Բեյլիսի գործը։

Ն ի կ ի տ ի ն — Հանդես եկավ երկաթուղայիններների դեմ դաժան ժանդարմի դերում։

Կ ե ր ե ն ս կ ի — Իսկ սրա մասին լավ է լռել։ Նրա ծառայության ցուցակը շատ երկար է...»[1]։

Բոլշևիկների կողմից ժամանակավոր կառավարության և նրա սոցիալիստ մինիստրների մերկացումը ուժեղ տպավորություն է թողնում մասսաների վրա։ Բանվորներն ու զինվորները իրենց բազմաթիվ բանաձևերում պահանջում էին դեն նետել բուրժուազիայի շահերը պաշտպանող Կերենսկու կառավարությունը։ Այն ժամանակ, երբ մենշևիկ պաշտպանողականներն ու սոցիալիստ-ռևոլյուցիոներները, բուրժուազիայի հետ համաձայնության մեջ մտնելով, խճճվում էին իմպերիալիստական պատերազմի ճահճում, բոլշևիկներն իրենց հետևողական և ժողովրդի շահերը արտահայտող որոշակի գիրքորոշումով արագորեն տիրապետում էին մասսաներին։

Ժամանակի մամուլը հարուստ նյութ է տալիս այն մասին, թե ինչպիսի վերաբերմունք ուներ աշխատավոր ժողովուրդը դեպի տարբեր պարտիաների վարած քաղաքականությունը։ Այդ տեսակետից ուշագրավ նյութ է տալիս Ի. Անդրեևի «Պարտիաների մասին» նամակը, որ տպագրել է «Բակինսկի ռաբոչի»-ն։ Իր նամակում Անդրեևը նկարագրում է, որ ինքը գյուղացի է, ձմռան ամիսներին աշխատում է քաղաքում որպես բանվոր, ամռանը նորից գյուղ է վերադառնում։ Շատ անգամ նա լսել է կադետների, էսերների, մենշևիկների և բոլշևիկների ճառերը և մասնակցել միտինգներին։ «Մենք բանվորներս մեկ ենք,— գրում է Անդրեևը,— բայց մեզ մի ոմն բաժանել է...»[2]։ Նամակի հեղինակը տեղական իշխանության ներկայացուցիչների և այդ պարտիաներից ամեն մեկի դասակարգային էությունը հետևյալ կերպ է բնորոշում։

«Զեմստվոյի պետին ես համեմատում եմ կադետների հետ, որոնք պաշտպանում են կապիտալը և ամբողջ բուրժուազիային», իսկ գյուղի տանուտերին նա նմանեցնում է մենշևիկներին, որոնք ասում են. «Եղբայրներ, հարկավոր է որևէ կերպ վերջացնել պատերազմը. մե՛նք չենք այն սկսել, ով որ սկսել է, թող նա էլ առաջինը վերջացնի...»։ Կուլակին էլ համեմատելով սոցիալիստ-ռևոլյուցիոներների հետ, Անդրեևը նշում է, որ պատերազմի մասին նա մենշևիկների նման է մտածում, իսկ հողի հարցում շատ հեռուներն է ընկնում։ Բայց հենց որ հասնում է հողին «կանգ է առնում ու մտածում. ինչպե՞ս վարվել, հիմա վերցնե՞լ այն, թե՞ մտածել մինչև Սահմանադիր ժողովը»[3]։

Գալով չքավոր գյուղացուն, Անդրեևը վերջինիս համեմատում է բոլշևիկների հետ։ Պատերազմի հարցում նա գյուղի տանուտերի կամ կուլակի նման չի դատում, նա գտնում է, քանի որ պատերազմը ժողովրդին պետք չէ, այն պետք է վերջացվի։ «Չպետք է սպասել, որ մի ոմն մի ժամանակ

[1] «Рабочий путь», № 22, 11 октября (28 сентября) 1917 г.
[2] „Бакинский рабочий", № 21, 2 июля 1917 г.
[3] Նույն տեղում։

երկնքից կիջնի և պատերազմը կվերջացնի։ Պետք է ավելի շատ զոռել բուրժուազիային, որ նա տրաքվի, և այն ժամանակ պատերազմը կվերջանա»[1]։

Հողի հարցում Անդրեևն ըմբռնել է բոլշևիկների պահանջի էությունը։ «Բոլշևիկը գտնում է,— գրում է նա,— ինչքան շուտ, այնքան լավ, չպիտի սպասել և մտածել. դրա համար շատ տարիներ են եղել, ամեն ինչ կարելի էր նախօրոք մտածել։ Իսկ այժմ կուիր երկաթը, քանի դեռ տաք է...»[2]։

Նամակի հեղինակը խորհուրդ է տալիս հետևել բոլշևիկներին. «Մենք առանց այն էլ տանջված և հալածված ենք բուրժուազիայի կողմից, իսկ մենշևիկներն ու էսեռները ստիպում են մեզ նորից իրար հետ գզվրտել։ Գյուղացու մեջ բոլշևիկի խորիմաստություն կա, բայց նա դեռ չի հասունացել բոլորն իմանալու, նա բոլորն իմանում է, բայց բացատրել չի կարողանում»[3]։

Բանվոր դասակարգի ռևոլյուցիոն տրամադրությունը ամենից ուժգին թափով բարձրանում էր մայրաքաղաքում՝ Պետրոգրադում։ Արդեն սեպտեմբերին մայրաքաղաքի բանվորները, Բալթիական նավատորմը և զինվորական մասսան համարյա ամբողջովին բոլշևիկների կողմն էին։ Թե ինչպիսի արագությամբ էր աճում բոլշևիկների ազդեցությունը մասսաների վրա, ցույց են տալիս 1917 թ. սեպտեմբերյան մունիցիպալ ընտրությունները։ Ահա թե ինչպիսին էին Մոսկվայի կենտրոնական և շրջանային դումաների ընտրությունների արդյունքները.

	1917 թ. հունիս		1917 թ. սեպտեմբեր	
էսեռներ —	58	տեղ	14	տեղ
կադետներ —	17	»	30	»
մենշևիկներ —	12	»	4	»
բոլշևիկներ —	11	»	47	»

Բոլշևիկների ազդեցության ուժեղացումը ավելի էր կատաղեցնում հակառևոլյուցիոներներին։ Բուրժուազիան խափանում էր արդյունաբերությունը, տրանսպորտը, պարենավորման գործը, որպեսզի ցույց տա, որ այդ բոլորի պատճառը «քայքայիչ», «ավերող» ռևոլյուցիան է։ Կադետների ներկայացուցիչները նշում էին, որ «տնտեսական քայքայումը ռևոլյուցիայի հեղինակազերկման կամպանիայի մի մասն է կազմում»։ Մինչդեռ հայտնի է, օրինակ, որ Խարկովի մոտ գտնվող ածխահանքերը հրդեհվել կամ թե ջրով լցվել էին իրենց իսկ տերերի կողմից։ Մոսկվայի տեքստիլ արդյունաբերության ֆաբրիկաներում ինժեներները իրենք էին փչացնում մեքենաները, իսկ երկաթուղագծի չինովնիկները շարքերից հանում էին գնացքներն ու երկաթուղագծերը։ Սպեկուլյանտները հսկայական հարստություն էին կուտակել, որի հետևանքով ծավալվել էր մեծ չափերի հասնող կաշառակերությունը և բարձր պաշտոնների վաճառք էր կատարվում։ Պետրոգրադի պարենային ապրանքների պահեստներից չորս ամսվա ընթացքում հափշտակվեց հացի երկու տարվա պաշար. հացի մնացած պաշարը նույնիսկ մի ամիս չբավարարեց քաղաքի պահանջները։ Իրենց սև գործն էին շարունակում ցարիզմի ռեակցիոն ուժերը։ Ոստիկանու-

[1] „Бакинский рабочий", № 21, 2 июля 1917 г.
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում։

թյունը գործում էր ցարի կողմնակիցների կամ թե Կերենսկու օգտին, նայած ով ինչքան կվճարեր։ Սահարյուրակային կազմակերպությունները ամբողջ ուժով գործում էին ռեակցիան ավելի և ավելի ուժեղացնելու համար։

Բոլշևիկների դաղափարները ցնցող տպավորություն էին թողնում Ռուսաստանի աշխատավոր մասսաների վրա։ Մի կողմից իրեն բախտն ու ապագան գիտակցող մասսաները, ձգտելով հասնել քաղաքական իշխանության դեկին, հսկայական վերելք էին ապրում, մյուս կողմից քայքայվող բուրժուական կարգերը ավելի և ավելի էին խճճվում և գլորվում նեխած ճահիճը։

Ամենուրեք զգացվում էր իշխող դասակարգերի անվերադարձ անկումը և ճնշված ու հալածված մասսաների աղբյուրի պես հորդացող ուժերի կուտակումն ու հզորացումը։

Ռեոլյուցիոն իրադրության հասունացման պայմաններում ժամանակավոր կառավարությունը գլուխը կորցրած դիմում է դաժան ռեպրեսիայի և հալածանքների մեթոդին։ Բնական է, ճնշող դասակարգերը կամովին չէին ուզում հրաժարվել իրենց տիրապետությունից։ Մասսաների ռեոլյուցիոն վերելքին զուգընթաց ավելի մոլեգին էր դառնում նրանց դիմադրությունը։

1917 թ. հուլիսի 5-ին յունկերները հարձակում են գործում «Պրավդա»-ի խմբագրության վրա։ Հաջորդ օրը ժամանակավոր կառավարությունը հրաման է արձակում Վ. Ի. Լենինին ձերբակալելու մասին։ Բայց, երբ հուլիսի 6-ին յունկերները Լենինին ձերբակալելու նպատակով ներխուժեցին նրա սենյակը, այն դատարկ տեսան։ Բոլշևիկյան պարտիան իր առաջնորդին թաքցրել էր խորը ընդհատակում։ Վ. Ի. Լենինը տեղափոխվեց Ռազլիվ կայարանը և ապա՝ Ֆինլանդիա։ Անցնելով ընդհատակ, Վ. Ի. Լենինը այնտեղից շարունակում էր ղեկավարել պարտիայի գործունեությունը։

Հուլիսյան օրերից հետո ստեղծված նոր պայմաններում պարտիան մշակում է ռեոլյուցիոն գործունեության նոր տակտիկա։ Այդ տակտիկան մշակեց պարտիայի VI համագումարը, որը տեղի ունեցավ հուլիսի վերջերին։ Համագումարը համառոտ ներածական խոսքով բացեց պարտիայի ականավոր և հնագույն անդամ Մ. Ա. Օլմինսկին։ Համագումարի նախագահության մեջ մտան Ատալինը, Սվերդլովը, Օլմինսկին և ուրիշներ։ Ծափերի բուռն տարափի տակ համագումարի պատվավոր նախագահ ընտրվեց Վ. Ի. Լենինը։

Համագումարը մշակեց ու հաստատեց ռեոլյուցիայի զարգացման տակտիկական կարևորագույն հարցեր, լուծեց՝ կարևորագույն մի շարք խնդիրներ, որոնք անհրաժեշտ էին ռեոլյուցիայի հետագա զարգացումն ապահովելու համար։ «Ամբողջ իշխանությունը Սովետներին» լոզունգը ժամանակավորապես հանվեց, այլևս հնարավոր չէր Սովետների խաղաղ նվաճումը։ Ռեպքերի զարգացման ընթացքը առաջ էր քաշում զինված ապստամբության միջոցով ժամանակավոր կառավարության տապալման և Սովետական իշխանության հաստատման անհրաժեշտությունը։